ՄԵՐ ՏԽՈՒՐ ԽՕՍՔԸ

Հայաստանում, սովետական կարգերի հաստատումից յետոյ, մանաւանդ ստալինեան դաժան տարիները ցնցեցին նաև մեր ազգային Մայր Եկեղեցին ու նրա բազմադարեան կեդրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Ընկերվարական, «հումանիստական» գաղափարներով սնունդ ստացած համայնավար գաղափարախօսութիւնը՝ ստալինեան իշխանութեան լծի տակ վերածուեց մի բռնակալ վարչակարգի, որ իրողութեան մէջ ժխտումը եղաւ 19-րդ դարու հումանիստական ընկերվարական իդէալների:

Սովետական ընկերվարութիւնը նոյնքան հեռու եղաւ արևմտեան ընկերվարական գաղափարախօսութիւնից, ինչքան հեռու եղած էր միջնադարեան եկեղեցական ինկվիզիցիան՝ Քրիստոսի Աւետարանից: Ստալինի մէջ ձեռք ձեռքի էին տուել Կարլ Մարքսը և Ճենգիզ Խանը:

Այդ տարիներին, դժոխային պայմանների զոհ գնաց նաև մեր Առաքելական Մայր Եկեղեցին և մեր ողջ հոգևորականութիւնը Հայաստանում և Սովետական Միութեան տարածքում: Փակուեցին Հայաստանի մեր վանքերն ու եկեղեցիները, շատերը ուղղակի քանդուեցին: Հալածուեցին, աքսորուեցին, բանտարկուեցին ու նահատակուեցին մեր Եկեղեցու հոգևոր գրեթէ բոլոր սպասաւորները: Ողբերգական պայմանների մէջ Ս. Էջմիածնում իր աչքերը փակեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորէն Ա Մուրադբեկեան երջանկայիշատակ Հայրապետը, ոչ բնական մահով:

Անարդար պիտի լինէր մոռացութեան տալ այդ դաժան ժամանակներում Հայ Առաքելական Եկեղեցու կրած տառապանքներն ու աւերումները: Ահա թէ ինչու մենք պարտք ենք համարում հրապարակել ցարդ գաղտնի մնացած արխիւային փաստաթղթերից մի կարևոր մաս, որ մեր ձեռքի տակ ունեցանք, փաստաթղթեր, որոնք վկայում են 1922-1938 տարիներին Հայ Եկեղեցու դէմ սանձազերծուած հալածանքներն ու բռնութիւնները:

Սոյն հրատարակութիւնը նուիրում ենք Խորէն Մուրադբէկեան նահատակ Հայրապետի սրբացեալ յիշատակին՝ նրա ծննդեան 120-ամեակի առթիւ:

Տխուր սրտով գրի ենք առնում այս տողերը և աղօթում, որ ներկայ և յետագայ հայ սերունդները սուրբ պահեն յիշատակը աւելի քան հազար և հինգ հարիւր հոգևորականների՝ եպիսկոպոսներ, վարդապետներ ու քահանայ հայրեր, որոնք զոհուեցին Վարդանանց հաւատքով «յանուն Յիսուսի և յանուն հայրենեաց»:

Լոյս և խունկ և օրհնութիւն նրանց բոլորի անմոռաց յիշատակին:

ՎԱՉԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ